



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԾԵՐ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԼԱՎԱՇ. ՀԱՅԵՐԻ ԱՐՔԱՆ

TK&PARTNERS
WEEKLY CLIENT ALERTS

#YourSupportTeam



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԾԵՐ

ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԱՀ-Ի ՎՃԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Նախագծով առաջարկվում է երրորդ երկրներից ՀՀ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ներմուծվող սննդամթերքի և դեղորայքի համար գանձվող ԱԱՀ-ի վճարման ժամկետը հետաձգել մինչև այդ ապրանքների իրացման փուլ՝ հաշվի առնելով տվյալ ապրանքների արագ իրացվելիությունը: Առաջարկվող փոփոխության գործողության ժամկետը նախատեսվում է սահմանել մինչև 2021թ-ի դեկտեմբերի 31-ը: Օրենքի փոփոխության նախագիծը ներառված չէ Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգում: Ավելին՝ [հղումով](#):



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԼԻԶԻՆԳԻ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԵՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նախագծով առաջարկվում է՝

- սահմանել և հստակեցնել լիզինգի գործընթացին մասնակցող բոլոր կողմերի իրավահարաբերությունները, պայմանագրերի իրավական հիմքերը, լիզինգի տեսակները, մնացորդային արժեքների ճիշտ որոշումը:

- ապահովել միասնական մոտեցում գործընթացի բոլոր մասնակիցների համար, մասնավորապես հաշվառման մեթոդաբանության մասով՝ թե Լիզինգատուի, թե Լիզինգառուի եւ թե Մատակարար ընկերության մոտ:

- լիզինգի առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցների գույքահարկի և վարչական տուգանքների գումարների վճարումն իրականացնել Լիզինգառուի հաշվառման վայրում, այլ ոչ թե Լիզինգատուի, ինչ կարող է նպաստել համայնքների եկամուտների աճին:

Օրենքի փոփոխության նախագիծը ընդունվել է առաջին ընթերցմամբ: Ավելին՝ [հղումով](#):

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՖՐԱՆԶԱՅԶԻՆԳԸ ԳՐԱՆՅՎԵԼՈՒ Է ԼԻԱԶՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ

Այսուհետ մտավոր սեփականության պահպանվող օբյեկտների ֆրանչայզինգի դեպքում տրամադրվող իրավունքը գրանցվելու և դադարեցվելու լիազոր մարմնի (Մտավոր սեփականության գործակալություն) կողմից: Օրինագիծն ամբողջությամբ ընդունվել է երկրորդ ընթերցմամբ: Ավելին՝ [հղումով](#):

#YourSupportTeam



Corporate Governance Center




IFLR1000

Chambers AND PARTNERS

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐՈՒՄ

ՀՀ կառավարության կողմից ընդունված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը հաստատելու մասին» որոշմամբ տրամադրվող վարկերի պայմաններում կատարվել են փոփոխություններ: Այսուհետ վարկերը տրամադրվելու են առավելագույնը 14 տոկոս փաստացի տոկոսադրույքով, իսկ մինչև 1 մլն դրամ գումարի վարկի դեպքում՝ մինչև 13 տոկոս փաստացի տոկոսադրույքով: Ընդ որում, վարկի հետ կապված ֆինանսական կառույցների ծառայությունների համար այլ վճարներ, մասնավորապես կանխիկացման վճար, սպասարկման վճար, միջնորդավճարներ և այլն վճարներ, չեն գանձվելու: Ավելին [հղումով](#):



#YourSupportTeam



Corporate
Governance
Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

Ֆինանսական ոլորտ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆԱԿԻ ԸՆԴՀԱՅՆՈՒՄ

Այսուհետ ֆինանսական համակարգի հաշտարարին կարող են դիմել ոչ միայն ֆիզիկական անձինք, այլև միկրոձեռնարկատիրության սուբեկտ հանդիսացող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը: «Լուսավոր Հայաստան» խմբակցության կողմից ներկայացված՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը Ազգային ժողովի մայիսի 5-ի նիստում ներկայացվել է երկրորդ ընթերցման: Ավելին՝ [հղումով](#):



ԼԻԶԵՆԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լիզինգի ինստիտուտը կարող է ենթարկվել զգալի փոփոխությունների, որոնցից ամենաեականը հանգում է *հետադարձ լիզինգ* և *երկրորդային լիզինգ* հասկացությունների օրենսդրական ամրագրմանը: Մասնավորապես, հետադարձ լիզինգը ենթադրում է լիզինգառուի ժամանակավոր օգտագործմանը և տիրապետմանը հանձնել հենց նրանից ձեռք բերված գույք, իսկ երկրորդային լիզինգը լիզինգի պայմանագրի դադարման, վաղաժամկետ դադարեցման կամ լուծման արդյունքում լիզինգառուին վերադարձված լիզինգի առարկայի կրկին հանձնումն է նոր լիզինգառուի տիրապետմանը և օգտագործմանը: Մայիսի 6-ին Կառավարության ներկայացրած օրենսդրական փաթեթն առաջին ընթերցմամբ ընդունվել է Ազգային ժողովի կողմից: Ավելին հետևյալ հղումներով՝ [հղում](#), [հղում](#), [հղում](#), [հղում](#), [հղում](#), [հղում](#):



#YourSupportTeam



Corporate Governance Center



IFLR1000

Chambers AND PARTNERS



Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՈՐ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Մինչև 2020 թվականի մայիսի 20-ը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում քննարկվելու է որոշման նախագիծ, որով նախատեսվում է զազամատակարարման համակարգում ներդնել խթանիչ սակագնային կարգավորումներ՝ պայմաններ ստեղծելով նաև համակարգում անհրաժեշտ ներդրումների իրականացման համար:

Մասնավորապես, նախագծով 2020 թվականից սկսած զազամատակարարման համակարգի ընկերությունների համար ամրագրվում է 10-ամյա ժամանակահատված, որը բաժանված է 2 հնգամյա ժամանակահատվածների: Հնգամյա ժամանակահատվածների ընթացքում տարեկան կտրվածքով չեն վերանայվելու ընկերության շահագործման և պահպանման ծախսերը (միայն նյութական և նորոգման ծախսերն են ենթարկվելու գնաճով ճշգրտման), կորուստների թույլատրելի մեծությունը՝ յուրաքանչյուր ժամանակահատվածի ավարտին սահմանելով թիրախային ցուցանիշներ, ինչպես նաև ամրագրելով անհրաժեշտ ներդրումների ծավալը: Այս մոտեցումը կարող է խթան հանդիսանալ, որպեսզի ընկերությունները յուրաքանչյուր 5-ամյա ժամանակահատվածում հնարավորինս արագ հասնեն ծախսերի օպտիմալացման և կորուստների կրճատման՝ այդ ընթացքում ստանալով լրացուցիչ օգուտներ, իսկ 5-ամյա ժամանակահատվածի ավարտին հաջորդող տարվա սակագներում արդեն իսկ հաշվի կառնվեն բարելավված ցուցանիշները՝ դրական ազդեցություն ունենալով սպառողներին վաճառվող բնական գազի սակագների վրա: Ավելին՝ [հղումով](#):

#YourSupportTeam



Corporate Governance Center



IFLR1000

Chambers
AND PARTNERS

Լավաշ. հացերի արքան



Հացն իր գործությամբ դարեր շարունակ եղել է հայերի հավատարիմ ուղեկիցը: Հայկական լեռնաշխարհում հաց թխել են դեռևս Ք.ա. 3-2 հազարամյակներում:

Եկեք հասկանանք, թե որտեղից է առաջացել «լավաշ» անվանումը: Լավաշը հայկական բառ է, որն առաջացել է հենց այն պատրաստելու գործընթացից: Խմորը գրտնակելուց հետո այն լավ քաշել և բացել են: Այստեղից էլ առաջացել է լավ քաշած, լավ քաշ, իսկ հետո էլ արդեն լավաշ անվանումը:

Ըստ ավանդության հաց թխելու արարողությունը կատարվում էր վաղ առավոտյան, իսկ կրակը թոնրում վառվում էր դեռ արևածագին: Իսկ հաց թխելու գործընթացն ուղեկցվում էր բարի լույսի օրհնանքներով և աղոթքներով: Հնում լավաշը թխել են տոնից տոն և մեծ քանակությամբ:

Հնում լավաշը պատերազմների ժամանակ հանդիսացել է զինվորների ուղեկիցն ու պաշտպանը: Մայրերն իրենց ձեռքով թխում էին լավաշը, չորացնում այն և դնում զինվորի ուսապարկի մեջ: Իր երկար պահպանության շնորհիվ այն զինվորներին փրկում էր սովից:

Հայերը նաև սովորություն են ունեցել նորահարսի ուսին լավաշ գցելու, ինչի միջոցով ակնկալել են, որ հարսն այդ օջախի հացը կավելացնի: Հայկական ավանդական հարսանիքներում այս սովորությունը պահպանվել է մինչ օրս:

ԿԱՌԱՐԴԱԿԱՆ ԼԱՎԱՇԸ

1988 թվականին է նկարահանվել հայկական ամենասիրելի մուլֆիլմերից մեկը՝ «[Կախարդական լավաշը](#)»: Մուլտֆիլմի հերոսն ազնիվ ու բարի Նաղաշն էր, ով ապրում էր իր լավաշ թխող մոր հետ և նրա ազնիվ քրտինքով թխած լավաշներն ուտելով էլ մեծանում էր: Եվ մի օր էլ Նաղաշը որոշում է հետևել մոր խորհրդին և գտնել իր «սրտի գործը»: Մակայն բազմաթիվ փորձությունների միջով անցնելուց հետո, նա վերադառնում է հայրենի գյուղ, վարում և ցանում իր մի լավաշաչափ հողը և վայելում իր արդար աշխատանքի արդյունքը: Ֆիլմի վերջում հերոսը հիշում է մոր խոսքերը.



«Հիշիր որդիս, երջանկությունն աշխատանքի մեջ է, իսկ բախտավորությունը՝ հայրենի հողում»

2014 թվականին հայկական լավաշը ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական ժառանգության ցանկում:

[Աղբյուր](#)

#YourSupportTeam



Corporate Governance Center



IFLR1000

Chambers AND PARTNERS